

**Յայտարարություն Տահէշի կողմէ առեւանգուած  
Սուրիացի Քիւրտ երեխաներուն վերաբերեալ**

Տարբեր աղբիւրներէ, համապատասխան տեղեկութիւններ հաղորդեցին թէ ահաբեկչական Իսլամական Պետութիւնը Իրաքի և Շամի մէջ (Տահէշ) առեւանգած է աւելի քան 150 աշակերտ-աշակերտուհի Սուրիացի Քիւրտերէն Մունպուճ քաղաքին մօտ 29/05/2014-ին, երբ կը վերադառնային Հալէպէն իրենց քաղաքը՝ Արաբունար (Քոպանի), միջնակարգի վկայականի քննութիւնները դիմելէն ետք այնտեղ: Մարդկային իրաւանց սուրիական դիտարանը հաստատեց թէ՛ աշակերտուհիները ազատ արձակուեցան, սակայն թոյլ չի տրուեցաւ անոնց վերադառնալու իրենց քաղաքը, այլ ստիպուեցան վերադառնալ դէպի Հալէպ: Դիտարանը նաև յայտնեց իր մտահոգութիւնը Տահէշի զինուորագրելը երեխաներուն, որոնք դեռ առեւանգուած են կազմակերպութեան մօտ, որպէսզի թակարդուած ինքնաշարժներ պայթեցնելու գործողութիւններ կատարեն կամ պայթեցնեն իրենք զիրենք պայթուցիկ գօտիներով:

Ազգային Համակարգող Մարմինը կը դատապարտէ ամենաուժեղ առումով, ըստ միջազգային մարդկային կանոնադրութեան, այս ահաբեկչական արարքը, և կը բերցնէ Տահէշ կազմակերպութիւնը լրիւ պատասխանատուութիւն այս երեխաներուն ֆիզիքական ու հոգեբանական ապահովութեան, պահանջելով անմիջապէս ազատ արձակել զանոնց, նաև ան կը բերցնէ վարչակարգը մեծ պատասխանատուութիւն տեղի ունեցած դէպքին, որովհետեւ արտօնութիւն չի տուաւ միջնակարգի վկայականի քննութիւններու կեդրոններ բացուին Արաբունար (Քոպանի) քաղաքին մէջ, ստիպելով աշակերտները մեկնիլ վտանգով դէպի Հալէպ կատարելու քննութիւնները:

Ազգային Համակարգող Մարմնի տեղեկատուական գրասենեակ

Դամասկոս 9/6/2014